ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 857-Ա/2 «31» մայիսի, 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 4-րդ գլխի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

(պաշտոնակատար)

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
պաշտոնակատարի
2021 թ. մայիսի 31-ի
թիվ 857-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների (այսուհետ՝ Թեմա) աջակցության մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (այսուհետ՝ ԳԿՀԴՆ) 2011 թ. օգոստոսի 24-ին ստորագրված «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին» մտադրությունների հուշագրի շրջանակներում:

1.2. Մրցույթի նպատակներն են՝ խթանել երկու երկրների գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցային կապերը՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող գիտական նախագծերի իրականացմանն աջակցություն տրամադրելու միջոցով, օժանդակել երիտասարդ գիտնականների շարժունության բարձրացմանը, հիմքեր ստեղծել համատեղ գիտական խմբերի ԵՄ շրջանակային ծրագրերին մասնակցության համար՝ խթանելով ՀՀ գիտական համայնքի Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման գործընթացը:

1.3. Կոմիտեն 12 կամ 24 ամիս տևողությամբ մինչև 10 դրամաշնորհներ կտրամադրի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում:

1.4. Հայտերը կարող են ներկայացվել հետևյալ թեմատիկ ուղղություններով՝

- ✓ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ,

- ✓ Կայուն գյուղատնտեսություն (ներառյալ սննդի տեխնոլոգիաներ և սննդի անվտանգություն),
- ✓ Կենսատեխնոլոգիա և կիրառական նշանակության բժշկագիտական հետազոտություններ,
- ✓ Ճգնաժամերի կանխմանը և ճգնաժամերի կառավարմանը նվիրված հետազոտություններ (ներառյալ՝ սոցիալական, առողջապահական և տնտեսական հարցադրումներ, ռիսկերի գնահատում և ռիսկերի կառավարում),
- ✓ Հասարակագիտական և հումանիտար հետազոտություններ՝ միջգիտակարգային հետազոտություններ:

1.5. Մրցույթին կարող են ներկայացվել հայտեր, որոնք համապատասխանում են Եվրոպական Կանաչ գործարքի հետևյալ առաջնահերթություններին՝

- ✓ Շրջակա միջավայրի տեխնոլոգիաներ և կայուն զարգացմանն ուղղված հետազոտություններ, այդ թվում՝ սոցիալական կայուն զարգացում,
- ✓ Գյուղատնտեսություն, սննդի անվտանգություն և հողօգտագործում,
- ✓ Մաքուր, մատչելի և անվտանգ էներգիա,
- ✓ Կայուն, խելացի փոխադրումներ և տրանսպորտ,
- ✓ Էներգիայի և ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ կառուցապատում և վերանորոգում:

Եվրոպական Կանաչ գործարք նախագծի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ կայքէջից՝ https://eurlex.europa.eu/legalcontent/EN/TXT/?qid=1588580774040&uri=CELEX:52019DC0640:

1.6. Մրցույթին մասնակցության գիտական նախագծերի հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության գիտնականներից կազմված խմբերի կողմից. հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել 4-ից 10 անդամներ՝ ներառյալ խմբի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար):

1.7. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

1.8. Թեմայի շրջանակներում համատեղ ստացած գիտական արդյունքի նկատմամբ հեղինակային իրավունքի շուրջ ծագած վեճերը հայաստանյան և գերմանական կողմի ղեկավարները կլուծեն խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

1.9. Թեմայի շրջանակներում համատեղ իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի և ԳԿՀԴՆ կողմից ստացած աջակցության մասին:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի ___ և ԳԿՀԴՆ ___ գիտական համատեղ թեմայի շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке КН МОНКС РА и МОИ ФРГ в рамках совместой научной темы ___ и ____ соответственно.

This work was supported by the RA MESCS Science Committee and German Federal Ministry of Education and Research in the frames of the joint research project SC _____ and BMBF____ accordingly.

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու թեմայի արդյունք և հետևաբար չի ընդունվելու հաշվետվության մեջ:

1.10. Թեմայի իրականացման 12 ամիսը լրանալուց հետո Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Մասնագիտական փորձագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.11. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին:

1.12. Մշտադիտարկման արդյունքները Խորհուրդը պետք է հաշվի առնի՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս:

1.13. Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.14. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբի անդամներին ներկայացվող պահանջները

2.1. Հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ, ինչպես նաև Թեմայի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Թեմայի հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող **պետական** կազմակերպություններում և բուհերում ներգրավված գիտաշխատողները և դասախոսները, առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները, մագիստրանտները (հնգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանողները) և մագիստրոսի աստիճան ունեցող անձինք:

2.3. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ 2 մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների, «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2020» մրցույթի շահառու ասպիրանտների և նրանց գիտական ղեկավարների, «Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2020), «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2020), «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2021) և «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի» (2021) շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմաների ֆինանսավորման սկիզբը:

2.4. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

2.4.1.ծնվել է 1951 թվականի հունվարի 1-ից հետո,

2.4.2 ունի գիտական աստիճան,

2.4.3.վերջին 5 տարիների ընթացքում `

- ունի առնվազն 2 գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index

Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)» կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում, կամ 5 գիտական հոդված հրատարակված Բարձրագույն որակավորման կոմիտեի ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում,

- կամ ունի 1՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում կամ 2՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): 1 մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 2 հոդվածների:

2.5. Խմբի անդամները (ներառյալ Ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.6. Խմբում պետք է ընդգրկվի Թեմային առնչվող մասնագիտությամբ առնվազն երկու կատարող, ով ծնվել է 1986 թվականի հունվարի 1-ից հետո: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով :

2.7. Մրցույթի հայաստանյան և գերմանական կողմերի հայտատուները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող նախագծի (Հավելված N 1) բովանդակությունը, որը կարող է տարբեր լինել՝ կախված կողմերի առջև դրված խնդիրներից, սակայն ներկայացված Թեմայի հայերեն և անգլերեն վերնագրերը պետք է համընկնեն: Համաձայնեցված և ձևավորված Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ գերմանական կողմը՝ ԳԿՀԴՆ:

2.8. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ թեմայի(ծրագրի) հետ,

- Ղեկավարի կողմից չի ներկայացվել նախկինում իրականացված գիտական թեմայի (ծրագրի) վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- Ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմանները,
- ներկայացվել է միայն Կոմիտե կամ միայն ԳԿՀԴՆ,
- Կոմիտե կամ ԳԿՀԴՆ ստացվել է Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- չի լրացվել ըստ Հայտերին ներկայացվող պահանջների,
- ներառում է պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

2.9. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

3. Ակնկալվող արդյունքները

3.1. Ծրագրի ավարտից հետո Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակներում պետք է ունենան Հրավերի «1.9» կետով սահմանված նշումով հրապարակումներ.

- առնվազն 1 գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին, երկրորդ կամ երրորդ քառորդում (Q1, Q2 կամ Q3 quartile) ընդգրկված ամսագրերում (https://www.scimagojr.com/journalrank.php),
- կամ առնվազն 2 գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)» կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում,
- կամ 1՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

3.2. Հրավերի «3.1» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում Կոմիտեի հայտարարած մրցույթներին Խմբի անդամների կողմից

ներկայացվելիք հայտի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով կամ գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ որպես Խմբի ղեկավար և 1 տոկոսի չափով միավոր՝ որպես կատարող ընդգրկված լինելու դեպքում: Հանրագումարում կհանվի (կամ կգումարվի) տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան՝ 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացված հայտի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո Կոմիտե ներկայացվող ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին Խորհրդի եզրակացության հիման վրա:

3.3. Թեմայի իրականացման ընթացքում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և (կամ) գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

4. Հայտ ներկայացնելը

4.1. Հայտը լրացնում և ներկայացնում է Ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

4.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 2),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆակուլտետի գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի տեղեկություն Ծրագրի օրիգինալության և արդիականության վերաբերյալ: Եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի տվյալ բնագավառի ՀՀ որևէ այլ հանրային գիտական կազմակերպան գիտական խորհրդի եզրակացություն,

- Խմբի մինչև 35 տարեկան անդամների վերջին դիպլոմի և անձնագրի պատճենները, իսկ ասպիրանտ կամ մագիստրանտ (հնգամյա կրթական ծրագրի դեպքում՝ ավարտական կուրսի ուսանող) հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանք(ներ)ը:

4.3 Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2021 թվականի սեպտեմբերի 7-ը ներառյալ:

4.4. «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ –ԳԿՀԴՆ - 2022» մրցույթի համար գերմանական կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ https://www.bmbf.de/foerderungen/bekanntmachung-3618.html կայքէջից:

5. Հայտերի գիտական փորձաքննությունը

5.1. Հայտերը ենթարկվում են գիտական փորձաքննության. հայաստանյան կողմի ներկայացրած Հայտերի փորձաքննությունը կազմակերպում է Կոմիտեն, իսկ գերմանական կողմինը՝ ԳԿՀԴՆ-ն:

5.2. Մրցույթի պայմանները բավարարող Հայտերը տրամադրվում են դրանց գնահատման համար ձևավորված Խորհրդին՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

5.3. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում Խորհրդում ներառված առնվազն երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկ (Հավելված 3):

5.4. Խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

5.5. Գիտական փորձաքննության ընթացքում գնահատվում են՝ Թեմայի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, տվյալ ուղղության զարգացման շահեկանությունը Հայասանի Հանրապետության համար, նախագծի իրականացման նախադրյալները, Ղեկավարի և խմբի ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտության իրականացմանը, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և նախահաշվի հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության մակարդակը, ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրի ուղղություններին

համապատասխանությունը և վերջինիս մասնակցելու պոտենցիալը, գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

5.6. Կոմիտեի, Խորհրդի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

5.7.Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ և ներկայացնում Խորհրդի քննարկմանը:

5.8. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

5.9. Ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ընդհանուր քանակը որոշվում է՝ հիմնվելով երկու կողմերի փորձաքննության արդյունքների վրա՝ հաշվի առնելով կողմերի ֆինանսական հնարավորությունները: Կոմիտեի նախագահը հաստատում է Թեմաների ու դրանց ղեկավարների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսական հատկացման չափը:

5.10. Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագիտական եզրակացությունը (ապահովելով փորձագետի անանունությունը), Խորհրդի գնահատականը, շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

5.11. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված Թեմաների և դրանց ղեկավարների ցանկը տեղադրվում է Կոմիտեի պաշտոնական կայքում:

5.12. Կոմիտեն կազմակերպությանը տրամադրում է տվյալ կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

5.13. Հայաստանյան և գերմանական կողմի ղեկավարների և հայաստանյան կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է համաձայն Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 4):

5.14. Սույն Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ

6. Այլ դրույթներ

6.1. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

6.2. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր («Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված գումարի չափով), որի պատճենը ներկայացվում է Կոմիտե:

6.3. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը:

6.4. Հայաստանյան գիտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալը կազմում է մինչև 8000,0 հազար ՀՀ դրամ, որի առնվազն 50 տոկոսը պետք է ուղղվի գործուղումներին: Մնացած մասը կարող է ուղղվել Խմբի երիտասարդ անդամների աշխատանքի վարձատրությանը, նյութերի և փոքր սարքավորումների ձեռքբերմանը, համատեղ գիտագործնական միջոցառումների անցկացմանը (տարեկան կտրվածքով 1-ից ոչ ավելի):

6.5. Գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես համագործակցող գերմանական կազմակերպություն այցելության համար, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում:

6.6. Հայաստանի Հանրապետությունում անցկացվող գիտագործնական միջոցառումների դեպքում հայաստանյան կողմը հոգում է կազմակերպչական ծախսերը, այդ թվում՝ հյուրերի կեցության, ՀՀ տարածքում նրանց փոխադրման, հանդիպման անցկացման համար անհրաժեշտ պարագաների, տարածքի վարձակալության և հյուրասիրության ծախսերը: Օրապահիկի ծախսեր այս դեպքում նախատեսված չեն:

6.7. Վերադիր ծախսերը (12 ամսվա համար) չպետք է գերազանցեն 250.0 հազար (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:

6.8. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավելի՝ քան ամսական 1500

ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, իսկ օրապահիկի համար ոչ ավելի՝ քան ամսական 1000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12 ամսվա ընթացքում):

6.9. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե Խմբի կատարողի համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի կատարողների թիվը մեկով կրճատելու (եթե մինչև 35 տարեկան կատարողը չէ) միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում(ներ)ը: Խմբի կատարողների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված N 1

«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ -ԳԿՀԴՆ-2022» մրցույթի հրավերի

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***Անոտացիա***

2. ***Խնդրի արդի վիճակի վերլուծությունը***

3. ***Թեմայի գիտական նպատակները և խնդիրները***

4. ***Հետազոտական ծրագիրը***

5. ***Իրականացման գիտական մեթոդները***

6. ***Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)***

7. ***Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

8. ***Միջազգային համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները, այդ թվում՝ ԵՄ շրջանակային ծրագրին մասնակցության հեռանկարների առումով***

9. ***Տվյալ ուղղությամբ Խմբի ձեռք բերումները***

10. ***Ակնկալվող արդյունքների (այդ թվում՝ գիտահանրամատչելի) քանակական և որակական ցուցանիշները*** (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարականկարողությանկիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

11. ***Օգտագործված գրականության ցանկը***

Հավելված N 2

«ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ -ԳԿՀԴՆ-2022» մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____

(անուն հայրանուն)

_____ ից

(ազգանուն)

_____

(հասցե)

_____

(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել հայ-գերմանական համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ -ԳԿՀԴՆ-2022» միջազգային մրցույթին --------- ծածկագրով առցանց ներկայացված Հայտի փաստաթղթերը:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ մրցույթի հրավերի պայմաններին և վերջիններիս հետ համաձայն եմ:

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2021 թ.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	**Գերազանց:** Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:
4	**Շատ լավ:** Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3	**Լավ:** Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:
2	**Միջին:** Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:
1	**Վատ:** Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0	**Շատ վատ:** Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:

Հարցաշար փորձագետի

1.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
2.	**Ծրագիր:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագիրը և դրանով լուծվելիք խնդիրներն ու նպատակները:	
3.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական թեման:	
4.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական ծրագրին:	
5.	**Նախագծի պլանավորում:** Որքանո՞վ են համապատասխանում գիտական ծրագրի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ են դրանք իրատեսական:	
6.	**Իրականացման նախադրյալներ: Մարդկային ներուժ:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը նախագծիիրականացմանը: Որքանո՞վ են բավարար առկա և (կամ) ձեռքբերվելիք ռեսուրսները նախագծի իրականացման համար:	
7.	**Նորարարական բնույթը**: Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիակա նարտադրանքների, սիստեմներիև մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
8.	**Միջազգային համագործակցություն**: Որքանո՞վ է հստակ հիմնավորված միջազգային համագործակցության անհրաժեշտությունըև արդյո՞ք այն կարող է ունենալ շարունակական բնույթ:	
9.	**Միջգիտակարգային բնույթը:** Արդյո՞ք Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են տվյալ բնագավառին հարակից կամ այլ բնագավառներին առնչով հետազոտություններ:	
10.	**Արդյունքների տնօրինում:** Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը (այդ թվում գիտահանրամատչելի) և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորման ծավալներին (արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
	Փորձագետի գնահատականը (10) գնահատականների գումարը)	
Փորձագետի մեկնաբանություններ *(ծավալը չի սահմանափակվում)*		
Նախագծի ներկայացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 1-5 կետեր)		
Հետազոտության իրականացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 6-10 կետեր)		

Հարցաշար Խորհրդի

1.	**Հետազոտության ղեկավարում:** Ղեկավարի մասնագիտական որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի (Հավելված N 4)	
2.	**Կատարողների կազմ:** Կատարողների մասնագիտական որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի:	
3.	**Համագործակցող խումբ:** Գերմանական կողմի ղեկավարի մասնագիտական որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի:	
4.	**Արդիականություն**: Որքանո՞վ է գիտական ծրագիրը համապատասխանում ոլորտի արդի վիճակին՝ հաշվի առնելով նաև գիտխորհրդի որոշումը:	
5.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում փոխայցելությունների պլանավորումը գիտական ծրագրի նպատակներին և որքանո՞վ է հիմնավորված ծախսերի նախահաշիվը:	
6.	**Շահեկանություն:** Որքանո՞վ է շահեկան տվյալ թեմայի իրականացումը ՀՀ-ում տվյալ ուղղության զարգացման հեռանկարների տեսակետից:	
7.	**Եվրոպական հետազոտական տարածքում ինտեգրման հեռանկարներ:** Որքանո՞վ է առաջարկվող գիտական ծրագիրը համապատասխանում ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրի գերակայություններին և որքանո՞վ է այն հեռանկարային շրջանակային ծրագրին ներկայացնելու դիտանկյունից:	
Մեկնաբանություն (հարցաշարի 1-7 կետեր)		

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների (առավելագույնը 10 հրապարակում)՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

Յուրաքանչյուր հոդվածի համար՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

***0.2**-ից ցածր **IF**-ի դեպքում նրան վերագրվում է՝*

***0.20**՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,*

***0.15**՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «AHCI», «SSCI»,«ESCI» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,*

***0.075**՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE»,«SSCI», «ESCI», «AHCI» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:*

«Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների համար՝

***1.00**-ից ցածր **IF**-ի դեպքում նրան վերագրվում է՝*

***1.00**՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts & Humanities Citation Index (AHCI)») ընդգրկված ամսագրերում գիտական հրապարակման դեպքում,*

***0.50**՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «ESCI», «AHCI» հղման համակարգերում չընդգրկված, բայց «Scimago Journal & Country Ranking (SJR)» հղման համակարգում ընդգրկված ամսագրի դեպքում,*

***0.15**՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի, ինչպես նաև արտասահմանյան հայագիտական ամսագրերի դեպքում,*

0.075՝ *ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:*

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտական հրապարակումների, նյութերի ժողովածուների հրապարակումների[1]: Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ[3] ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումները:

Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

<u>Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտական հրապարակումների կամ հոդվածի համար՝</u>

$$E_2 = \begin{cases} \sum B \dfrac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \dfrac{CA}{N^{1/3}} \end{cases}$$

որտեղ՝

B=0,30՝ *Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում,*

CA=0,75՝ *արտերկրում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով կամ հայերեն),*

CA=0,50՝ *ՀՀ-ում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով կամ հայերեն), կամ (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում արտասահմանում,*

CA=0,30՝ *մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում ՀՀ-ում,*

CA=0,15՝ *հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,*

CA=0,075՝ *հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),*

P_{sh}՝ *ծավալ (տպագրական մամուլ)[2]:*

---

[1]Երկրորդ կետով ներկայացված հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, կենսագրականները, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ աշխատությունների խմբագրումը և/կամ կազմումը:

[2]Մեկ տպագրական մամուլը համարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի:

3) Գիտաժողովների մասնակցության: Գնահատվում են միայն գիտաժողովի նյութերում (Proceeding) 1 էջից ավելի ծավալ ունեցող հրապարակումները՝

$$E_3 = \sum \frac{P}{N^{1/3}}$$

որտեղ՝

P=0,15՝ *արտերկրում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութ,*

P=0,075՝ *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:*

1.